Դիլիջանի համայնքի ղեկավար

պարոն՝ Դ. Սարգսյանին

Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր ԹԻՎ 02

23.09.2022Թ.

Հայտնում եմ Ձեզ, որ Դիլիջան համայնքի 2022թ. տեղական բյուջեի եկամտային մասում նախատեսված ինքնակամ կառուցված շենք-շինությունների օրինականացման վճարները ըստ տարեսկզբի հաստատված պլանի սահմանվել 5000000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ, սակայն կապված ինքնակամ շինությունների օրինականացման համար Դիլիջանի համայնքապետարան դիմած քաղաքացիների դիմումների քանակի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կանխատեսվում է հավաքագրել ևս ՝ 50 000 000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ: Առաջարկում եմ Դիլիջան համայնքի 2022թ. տեղական բյուջեի վարչական մասում կատարել համապատասխան փոփոխություններ, այն է, նշված գումարը ճանաչել որպես եկամուտ և ուղղել վարչական բյուջեի ծախսային մասին՝ հետևյալ դասակարգմամբ.

1) «05-01-01» Դիլիջան համայնք (Աղբահանում) բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվին հոդված 4511 /սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին/- 12 000 000 (տասներկու միլիոն) ՀՀ դրամ:

2) 04-05-01 Դիլիջան համայնք (Ճանապարհային տրանսպորտ) բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվին հոդված 4511 /սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին/- 18 000 000 (տասնութ միլիոն) ՀՀ դրամ:

3) «10-07-01» Դիլիջան համայնք (Սոցիալական հատուկ արտոնություններ) բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվին հոդված 4729 /այլ նպաստներ բյուջեից/ - 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ,

4) «11-01-02» Դիլիջան համայնք (Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ) բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվին հոդված 4891 /պահուստային միջոցներ/ - 17 000 000 (տասնյոթ միլիոն) ՀՀ դրամ:

Զեկուցագիր կազմող՝

Դիլիջանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական,

եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժ/պ՝ Վարդան Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
«ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ»
ՀՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA
TAVOUSH REGION
«UTILITY SERVICE DILIJAN
COMMUNITY»
CNPO

3901,Դիլիջան, Մյասնիկյան 66
Հեռ. (+374) 94 83 40 04

3901, Myasnikyan str. 66, Dilijan
Tel: (+374) 94 83 40 04

23 սեպտեմբեր 2022թ.

Դիլիջան համայնքի ղեկավար Դ.Սարգսյանին
<<Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում >>
ՀՈԱԿ տնօրենի ժ/պ Վ.Փիլոյանից

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Հայտնում եմ Ձեզ, որ <<Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում >> ՀՈԱԿ կանոնավոր գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտ է 12000000 /տասներկու միլիոն/ դրամ՝ դիզելային վառելիք գնելու համար: Հավելյալ գումարի անհրաժեշտությունը առաջացել է դիզելային վառելիքի գնի թանկացման հետ կապված: 2021 թվականին դիզելային վառելիքի մեկ լիտրի միջին գինը եղել է 358 դրամ: Այժմ դիզելային վառլիքի մեկ լիտրի գինը տատանվում է 630- 670 դրամի սահմանում:

Տնօրենի ժ/պ՝ **Վ.Փիլոյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

«ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ»

ՀՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA

TAVOUSH REGION

«TRANSPORT AND LIGHTING

DILIJAN COMMUNITY»

CNPO

)01 ՀՀ Տավուշ թ. Դիլիջան Մյասնիկյան 66

ın./ֆաքս/ +374 94 55 77 90

mail: lustransp21@mail.ru

3901 RA Tavush Dilijan str. Myasnikyan 66

Tel/fax// +374 94 55 77 90

E mail: lustransp21@mail.ru

N⁰ 10

«23» սեպտեմբերի 2022թ.

Դիլիջանի համայնքապետ

Պարոն Դ. Սարգսյանին

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Դիլիջան համայնքի տրանսպորտ և լուսավորություն» ՀՈԱԿ-ի 2022թվականի նախահաշվով տրանսպորտային նյութեր հոդվածով նախատեսված էր 16 060.0 հազ.դրամ(տասնվեց միլիոն վաթսուն հազար) դրամ, կենցաղային և հանրային սննդի նյութեր հոդվածով՝ 1317.0(մեկ միլիոն երեք հարյուր տասնյոթ հազար) դրամ:Տնտեսական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտություն առաջացավ ձեռք բերելու նախօրոք չնախատեսված նոր նյութեր և նշված հոդվածներից պակասեցվեց 1 480 .0(մեկ միլիոն չորս հարյուր ութսուն հազար) դրամ:

Կապված բենզինի, դիզ վառելիքի, քսայուղերի գների կտրուկ բարձրացման հետ, անհամապատասխանություն է առաջացել կազմակերպության ֆինանսական վիճակի և վճարունակության միջև : Առաջացել են մեծ գումարով կրեդիտորական պարտքեր արդեն ձեռք բերված դիզ վառելիքի դիմաց վճարումներ իրականացնելու համար:

Տեղեկացնելով Ձեզ, խնդրվում է թույլատրեք հատկացնել ֆինանսական միջոցներ, առաջացած կրեդիտորական պարտքերը մարելու և մինչև տարեվերջ տրանսպորտային նյութեր ձեռք բերելու համար:

Հարգանքով

Տնօրեն Է. Մարգարյան